**Նպատակ**

Երեխա ունեցող ընտանիքներին մարզային բնակավայրերում բնակելի անշարժ գույք ձեռքբերելու նպատակով դրամական աջակցության տրամադրում

**Դրամական աջակցության չափ**

1) դիմողի տարիքը գերազանցում է 30 տարին, ապա

դրամական աջակցության գումարը կազմում է ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի արժեքի 5%, բայց ոչ ավել, քան 1 մլն դրամ

*3-րդ և հաջորդ երեխայի դեպքում դրամական աջակցության չափն ավելացվում է ևս 5%-ով, բայց ոչ ավել, քան յուրաքանչյուր երեխայի հաշվով 500 000 դրամ, ընդ որում, ընդհանուր աջակցության չափը չի կարող գերազանցել 2 մլն դրամը:*

2) դիմողի տարիքը չի գերազանցում է 30 տարին, ապա

դրամական աջակցության գումարը կազմում է ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի արժեքի 5%-ի և 30%-ը, բայց ոչ ավել, քան 1.3 մլն դրամ

*3-րդ և հաջորդ երեխայի դեպքում դրամական աջակցության չափն ավելացվում է ևս 5%-ով, բայց ոչ ավել, քան յուրաքանչյուր երեխայի հաշվով 500 000 դրամ, ընդ որում, ընդհանուր աջակցության չափը չի կարող գերազանցել 2.6 մլն դրամը:*

**Հիմնական պայմաններ**

1) դիմողն ունի առնվազն 2 անչափահաս երեխա,
2) անշարժ գույքը ձեռք է բերվում 01.07.2020թ. հետո,
3) անշարժ գույքի գնահատված և շուկայական արժեքը չի գերազանցում 30 մլն դրամը, իսկ 3-րդ և հաջորդ երեխայի դեպքում նշված սահմանաչափն ավելացվում է ևս 5 մլն դրամով,
դիմողի կողմից կատարվող կանխավճարի նվազագույն չափը երկրորդային շուկայի դեպքում կազմում է 10%, իսկ առաջնային շուկայի դեպքում՝ 7.5%:

**Աջակցություն ստանալու կարգը**

1) վարկի տրամադրման դրական որոշման դեպքում Բանկը դիմում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (ԱՍՆ),
2) ԱՍՆ կողմից աջակցության տրամադրման/մերժման մասին գրությունն ուղարկվում է և՛ Բանկին, և՛ վարկառուին,
3) վարկի տրամադրման օրը ԱՍՆ կողմից Բանկ փոխանցված աջակցության գումարը փոխանցվում է վաճառողի հաշվին: